# «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 23.1-րդ հոդվածի 2-րդ մասում «համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն ժամկետը:» բառերը փոխարինել «վերաբերյալ պատշաճ ձևով տեղեկացման համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) «չեղյալ» բառը փոխարինել «ուժը կորցրած» բառով,

2) երկրորդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն.

«Հայտը մերժվում և լիցենզավորող մարմնի որոշումը ուժը կորցրած է համարվում պետական տուրքը վճարելու համար սույն օրենքով սահմանված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: